

ղեցին. այնտեղէն հանգուցեալին դազաղը մեծաշուք թափօրով նախապէս կը տարուի Սամաթիա, «եւ մեք, կը գրէ Երեմիա, յաջմէ եւ յահեկէ ասէաք զերգս շաւրականաց մինչև ի կամարն Սրբոյն Գէորքայ» (էջ 241):

Երեմիայի եկեղեցասէր ու բարեպաշտ հոգին փոխանցուած կը տեսնենք իր գերդաստանի անդամներուն, առաւելապէս իր եղբայրներուն ու զաւակներուն վրայ: Տարակոյս չկայ՝ թէ իրմէ և իր քահանայ հօրմէն կրած ազդեցութեամբ է որ իր երկու կրտսեր եղբայրները, Գէորգ ու Կոմիտաս՝ աշխարհիկ ու իր անդրանիկ որդին Ամբակում՝ կուսակիցն քահանայութեան կարգ ընդունած էին. Գէորգ վերակոչուած էր Տէր Մարտիրոս ու Ամբակում՝ Գրիգորիս վարդապետ. Կոմիտասի անունը մնացած էր անփոփոխ: Այսպէս Քէօմիւրճեան գերդաստանը եղած էր զետական տուն մը, ուր ստէպ կը յաճախէին եղիազար և Մարտիրոս վարդապետներ և այդ ժամանակի յայտնի բարձրաստիճան եկեղեցականներ: Միեւնոյն հոգևոր կեանքով սնած էին նաև գերդաստանի իգական անդամները: Անոնց երգեցողութիւնները տան մէջ շարականներ ու հոգևոր տաղեր էին: Ետքէն պիտի տեսնենք որ Տէր Կոմիտասի դուստրը եղած է շարականագէտ: Իր 14 ամսու Յովսէփ զաւկին մահը գուժող նամակին մէջ Երեմիա կը գրէ Էջմիածին իր Գրիգորիս վարդապետ որդիին. «Լուար զորս ի քերցն ուսեալ էր (Յովսէփն) զսաղաշափութիւն զերգոց հիւսմանց՝ ընդ եղանակին և ինքն առեալ՝ ևս առաւել գեղգեղեալ քաղցր երգէր» (Յաւելուած, էջ 449):

Այս առթիւ կանխենք ըսել թէ Երեմիա իր հեղինակած գանձերէն ու ողբերէն զատ ուրիշ հոգևոր երգեր ալ շարագրած ու անոնց եղանակները ինք յօրինած է, որոնք կ'երգուին եղեր եկեղեցիին մէջ: Այս մասին ոմն Իրբանոսի ըրած մեղադրանքներուն կը